

Հաստատված է
«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական ՓԲԸ կողմից
գործադիր տնօրեն՝ Լ. Ալթունյան

ԵՐՐՈՐԴ ԱՆՉԱՆՑ, ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԵՎ
ԲԵՌԱՆ ՀԱՄԱՐ ԱՎԻԱՓՈԽԱԴՐՈՂՆԵՐԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

Երրորդ անձանց, ուղևորների հանդեպ և բեռան համար ավիափոխադրողների քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրության սույն կանոնները (այսուհետև տեքստում՝ կանոններ) մշակված են Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքի և ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական այլ ակտերին համապատասխան:

Սույն կանոնները հանդիսանում են երրորդ անձանց, ուղևորների հանդեպ և բեռան համար ավիափոխադրողների քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմանագրի անքակտելի մասը: Ապահովագրության պայմանագիրը կարող է բովանդակել այլ պայմաններ, որոնք որոշվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ և չեն հակասում Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը:

Պատճառված վնասի համար պատասխանատվության ռիսկի կամավոր ապահովագրության պայմանագիրը համարվում է կնքված հոգուտ այն անձանց, որոնց կարող է վնաս պատճառվել (հոգուտ շահառուների), եթե անգամ պայմանագիրը կնքվել է հոգուտ ապահովադրի կամ պատճառված վնասի համար պատասխանատվություն կրող այլ անձի կամ պայմանագրով նշված չէ, թե ում օգտին է այն կնքվել:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ավիափոխադրողի քաղաքացիական պատասխանատվության տակ հասկացվում է օդանավի սեփականատիրոջ կամ շահագործողի պարտավորությունները՝ համաձայն ՀՀ օրենքի, միջպետական պայմանագրերի (համաձայնագրերի), դատարանի որոշման կամ կնքված պայմանագրի հատուցելու ֆիզիկական կամ իրավաբանական անձանց պատճառված վնասը, որն առաջացել է օդանավի շահագործման հետևանքով:

1.2. Սույն կանոններով «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական ՓԲԸ (հետագայում տեքստում՝ Ապահովագրող) կնքում է ավիափոխադրողի քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության պայմանագրեր իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ (հետագայում տեքստում՝ Ապահովադիրներ):

1.3. Համաձայն սույն կանոնների, ապահովագրության օբյեկտ են համարվում Ապահովադրի այն գույքային շահերը, որոնք կապված են վերջինիս պարտականությունների հետ՝ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով հատուցել օդանավի շահագործման ընթացքում նրա կողմից ֆիզիկական անձի առողջությանը կամ գույքին, կամ իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը:

1.4. Հատուցումներ կատարելու համար Ապահովագրողի պարտականության առաջացման անհրաժեշտ պայմաններ են համարվում թռիչքա-տեխնիկական և սպասարկող անձնակազմի կողմից օդանավի օդանավորդագիտության, տեխնիկական շահագործման և սպասարկման գծով պահանջների պահպանումը, ինչպես նաև այլ կարգադրությունների կատարումը, որոնք ելնում են իրավասու կազմակերպությունների ցանկացած պաշտոնատար անձանցից և վերաբերվում են օդանավի շահագործման անվտանգությանը և օդային շարժման կառավարմանը:

Ապահովադիրը պարտավոր է ապահովել յուրաքանչյուր թռիչքին սարքին օդանավի բաց թողումը, որը պիտանի է շահագործմանը, ինչպես նաև սիստեմատիկորեն վարել օդանավի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթավորում, որը պահանջվում է գործող կանոններով և այդ փաստաթղթերը տրամադրել Ապահովագրողին, (կամ նրա ներկայացուցչին)՝ Ապահովագրողի պահանջով:

1.5. Ապահովագրողի նկատմամբ ապահովագրական հատուցման մասին պահանջի իրավունքը գործում է սկսած այդպիսի իրավունքի ծագման պահից՝ երեք տարվա ընթացքում, եթե Ապահովագրողի պարտավորությունը բխում է առողջությանը պատճառված վնասից, կամ մեկ տարվա ընթացքում՝ եթե Ապահովագրողի պարտավորությունը բխում է գույքին պատճառված վնասից:

2. Ապահովագրական ռիսկեր

2.1. Ապահովագրական դեպք է համարվում ապահովագրության պայմանագրում նշված օդանավի շահագործման հետևանքով երրորդ անձանց կողմից Ապահովադիրին՝ վերջինիս կողմից պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու փաստը:

Ապահովագրողի պատասխանատվության ծավալը որոշվում է Ապահովադիրի կողմից ընտրված ապահովագրության պայմանների.

ա) երրորդ անձանց (բացառությամբ ուղևորների և բեռնատերերի) հանդեպ ավիափոխադրողի քաղաքական պատասխանատվությունը,

բ) ուղևորների հանդեպ ավիափոխադրողի քաղաքական պատասխանատվությունը,

գ) բեռնատիրոջ (բեռան համար) հանդեպ ավիափոխադրողի քաղաքացիական պատասխանատվությունը,

դ) 2.1. կետի ա)-ից գ) ենթակետերի ցանկացած համակցության դեպքում ավիափոխադրողի քաղաքացիական պատասխանատվությունը:

2.2. Ապահովագրողը պատասխանատվություն է կրում բոլոր այն իրադարձություններով, որոնք տեղի են ունեցել ապահովագրության պայմանագրի գործողության ժամանակաշրճանում, բացառությամբ այն դեպքերի, որոնք նախատեսված են սույն կանոններով և գործող օրենսդրությամբ: Ապահովագրության պայմանագիրը կարող է նախատեսել պատասխանատվության ապահովագրում մեկից ավելի օդանավ շահագործելու դեպքում: Այդ դեպքում սույն պայմանների դրույթները տարածվում են յուրաքանչյուր օդանավի վրա առանձին վերցրած:

2.3. Ստանդարտային պայմանները նախատեսում են ռիսկերի ապահովագրություն օդանավերի բեռնատար և ուղևորատար փոխադրումների նպատակով թույլատրված երթուղիներով և օդանավի նշանակությանը համապատասխան թռիչքներ կատարելիս, բացառությամբ այն դեպքերի, որոնք նշված են ստորև՝ 2.4. և 2.5. կետերում:

2.4. Լռացուցիչ պայմանները նախատեսում են օդանավի հատուկ շահագործման ռիսկերի ապահովագրություն.

ա) հատուկ թռիչքների կատարման դեպքում, որոնք կապված են մեծ վտանգի հետ, այն է. փորձարկումների, ռեկորդներ սահմանելու, ավիացիոն տեխնիկայի ցուցադրումների, թռիչքային անձնակազմի ուսուցման, պարեկության, հրդեհների դեմ պայքարի, օդանավից ինչոր նյութի փոշիացնելու ժամանակ:

բ) ցանկացած տեսակի օգնությամբ օդանավի տեղափոխման դեպքում՝ բացառությամբ օդանավակայանի սահմաններում բուկսիրով տեղափոխելուց:

Այդ դեպքում պայմանագրի հատուցման հատուկ պայմաններում կատարվում է համապատասխան գրառում:

2.5. Ապահովագրության հատուկ պայմանները նախատեսում են պատերազմի, արևանգման և օդազնացության վտանգների (Հավելված 1՝ կանոնադրություն AVN. 48B) և ճառագայթահարման ազդեցության և ճառագայթային աղտոտման ներգործության (Հավելված 2՝ կանոնադրություն AVN.38A) ռիսկերի հատուցումները, որոնք սույն պայմաններով հանվում են հիմնական և լռացուցիչ պայմաններով ապահովագրման ժամանակ հատուցվող ռիսկերի թվից:

Օդանավի ապահովագրման հատուկ պայմանները արտացոլվում են ապահովագրության պայմանագրում առանձին և գործում են Ապահովագրողի տեղեկատվական ապահովման հատուկ ռեժիմում:

3. Ապահովագրության պայմանները

3.1. Երրորդ անձանց (բացառությամբ ուղևորների և բեռնատերերի) հանդեպ ավիափոխադրողի քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության պայմաններ.

3.1.1. Ապահովագրողը պարտավորվում է հատուցել Ապահովադրին այն ծախսերը, որոնք վերջինս կրել է երրորդ անձանց (բացառությամբ ուղևորների և բեռնատերերի) առողջությանը (մարմնական վնասվածքներ, վերքեր՝ հավասարապես մահացու) և գույքին պատճառված վնասի համար փոխհատուցման հետևանքով, որոնք Ապահովադիրը պետք է հատուցի ՀՀ օրենքին, միջազգային պայմանագրի կամ դատարանի որոշմանը համապատասխան, եթե այդպիսի վնասը պատճառվել է օդանավի կողմից կամ ցանկացած անձի կամ առարկայի կողմից, որը դուրս է ընկել օդանավից:

3.1.2. Ապահովագրողը պարտավորություն չի կրում այն հայցերով ընդդեմ Ապահովադրի, որոնք կապված են առողջության (մարմնական վնասվածքներ, վերքեր՝ հավասարապես մահացու) և գույքի այն վնասի հետ որը պատճառվել է.

ա) Ապահովադրի ծառայողներից կամ նրա գործարար գործընկերներից ցանկացածին՝ նրանց զբաղվածության ժամանակ կամ հետևանքով կամ նրանց կողմից Ապահովադրի հետ ցանկացած համաձայնագրով պարտականությունները կատարելիս,

բ) Ապահովադրի թռիչքային կամ սպասարկող անձնակազմի կամ տեխնիկական անձնակազմի ցանկացած անդամին՝ նրանց կողմից օդանավի շահագործման հետ կապված իրենց պարտականությունները կատարելիս,

գ) ցանկացած ուղևորին՝ օդանավի նավակողում գտնվելու ժամանակ կամ նստեցման կամ ցած իջեցման ընթացքում,

դ) ցանկացած սեփականության (բացառությամբ օդանավի նավակողում գտնվողից), որը պատկանում է կամ հանձնարարված է Ապահովադրին, կամ գտնվում է Ապահովադրի տիրապետման տակ:

3.1.3. Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում այն հայցերով ընդդեմ Ապահովադրի, որոնք ուղղակի կամ անուղղակի կապված են.

ա) աղմուկի (մարդկային ականջի կողմից ընկալվող կամ չընկալվող), թրթռումների, ձայնային հարվածի կամ նման բնույթի այլ երևույթների հետ,

բ) միջավայրի որևէ աղտոտման հետ,

գ) էլեկտրական կամ էլեկտրամագնիսական խոչընդոտների հետ, որոնք հանված են աղմուկի, աղտոտման և այլ վտանգների ազդեցության ռիսկերի բացառման մասին կանոնադրությամբ՝ AVN.46B (հավելված 3),

դ) սեփականության իրավունքի խախտման հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովադրի դեմ հայցերը կապված են օդային աղետի (օդանավի պայթում, անկում, բախում) հետևանքով պատճառված վնասի, կամ թռիչքների գրանցողի կողմից թռիչքի այնպիսի վթարային իրավիճակի արձանագրման հետ, որը պատճառ է հանդիսացել օդանավի ոչ նորմալ շահագործմանը:

3.2. Ուղևորների հանդեպ ավիափոխադրողի քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության պայմաններ.

3.2.1. Ապահովագրողը պարտավորվում է հատուցել Ապահովադրին այն ծախսերը, որոնք վերջինս կրել է ՀՀ օրենքի, միջազգային պայմանագրի կամ դատարանի որոշմանը համապատասխան՝ ուղևորներին փոխհատուցման հետևանքով.

ա) օդանավի ուղևորների՝ նրանց նավակողում գտնվելու ժամանակ, կամ նստեցման և ցած իջեցման ընթացքում, առողջությանը՝ մարմնական վնասվածքներ, վերքեր (հավասարապես մահացու) պատճառելու դեպքում,

բ) օդանավի հետ պատահարի հետևանքով ուղևորների բեռների և/կամ ձեռքի ծանրոցի կորստի կամ վնասի դեպքում:

3.2.2. Բացառություններ, որոնք կիրառվում են միայն ուղևորների հանդեպ ավիափոխադրողի պատասխանատվության ապահովագրության նկատմամբ:

Ավիափոխադրողը պատասխանատվություն չի կրում այն հայցերով ընդդեմ Ապահովադրի, որոնք կապված են առողջության (մարմնական վնասվածքներ, վերքեր՝ հավասարապես մահացու) և գույքի այն վնասի հետ, որը պատճառվել է.

ա) Ապահովադրի ծառայողներից կամ նրա գործարար գործընկերներից ցանկացածին՝ նրանց զբաղվածության ժամանակ կամ հետևանքով կամ նրանց կողմից Ապահովադրի հետ ցանկացած համաձայնագրով պարտականությունները կատարելիս,

բ) Ապահովադրի թռիչքային կամ սպասարկող անձնակազմի կամ տեխնիկական անձնակազմի ցանկացած անդամին՝ նրանց կողմից օդանավի շահագործման հետ կապված իրենց պարտականությունները կատարելիս:

3.2.3. Սույն կանոնների 3.2. կետով «Ուղևորների հանդեպ ավիափոխադրողի քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության պայմաններ» համաձայն Ապահովագրողի պատասխանատվության առաջացման պարտադիր նախադրյալներ.

ա) Ուղևորներին օդանավ նստեցումից առաջ Ապահովադիրը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները, որպեսզի բացառվի կամ նվազեցվի Ապահովագրողի այն պատասխանատվությունը, որը հետևում է սույն կանոնների 3.2.1. (ա) և 3.2.1. (բ) ենթակետերից՝ ուղևորների հանդեպ ավիափոխադրողի օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությունից,

բ) Եթե 3.2.3. (ա) ենթակետին համապատասխան ձեռնարկված միջոցառումները ներառում են ուղևորների տոմսի կամ ուղեբեռան անդորրագրի հանձնումը, ապա այդպիսիք պետք է պատշաճ կերպով ձևակերպվեն և հանձնվեն ուղևորին՝ նախքան նրա օդանավ նստելը,

3.2.4. Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում այն հայցերով ընդդեմ Ապահովադրի, որոնք կապված են առողջության (մարմնական վնասվածքներ, վերքեր՝ հավասարապես մահացու) և գույքի այն վնասի հետ, որը պատճառվել է.

ա) Ապահովադրի օդանավի անձնակազմի կամ այլ անձնակազմի ցանկացած անդամին, թեկուզ եթե իրադարձությունը տեղի է ունեցել վերջիններիս կողմից ապահովագրության պայմանագրում նշված օդանավը կառավարելիս,

բ) Ապահովադրի ցանկացած աշխատակցին կամ նրա գործարար գործընկերոջը, որն առաջացել է նրանց զբաղվածության ժամանակ կամ հետևանքով, կամ Ապահովադրի հետ համաձայնագրով նրանց կողմից պարտականությունները կատարելիս:

3.3. Բեռնատիրոջ (բեռան համար) հանդեպ ավիափոխադրողի քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության պայմաններ.

3.3.1. Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադրին հատուցել այն ծախսերը, որոնք վերջինս կրել է բեռան սեփականատիրոջը (բեռնատիրոջը) այն վնասի համար փոխհատուցման հետևանքով, որը Ապահովադիրը պետք է հատուցի համաձայն օրենքի կամ պայմանագրի՝ հետևյալ դեպքերում.

ա) գույքին (բեռանը) վնաս պատճառելու դեպքում, որի համար Ապահովադիրը պատասխանատվություն է կրում օդանավով փոխադրման պայմանագրով կամ,

բ) երբ այդպիսի պայմանագիր գոյություն չունի՝ այն գույքին (բեռանը) վնաս պատճառելու դեպքում, (օդանավում գտնվելու ժամանակ կամ օդանավ բարձելու (բեռնաթափելու) ժամանակ), որի վերաբերյալ արվում է սահմանված սահմանաքանակից ավելի արժեքի հատուկ հայտարարություն:

3.3.2. Նշված հատուցումը վճարվում է ապահովագրության պայմանագրով նախատեսված պատասխանատվության սահմանների և ֆրանշիզայի համապատասխան:

3.3.3. Սույն կանոնների 3.3. «Բեռնատիրոջ (բեռան համար) հանդեպ ավիափոխադրողի քաղաքացիական պատասխանատվության պայմաններ» կետի համաձայն կնքված պայմանագրով Ապահովագրողի պատասխանատվության առաջացման պարտադիր նախադրյալներ.

ա) բեռը բարձելուց առաջ Ապահովադիրը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները, որպեսզի բացառի կամ նվազեցնի Ապահովագրողի այն պատասխանատվությունը, որը հետևում է 3.3.1. (ա) և (բ) ենթակետերով,

բ) եթե 3.3.3. (ա) ենթակետին համապատասխան ձեռնարկված միջոցառումները ներառում են բեռնատիրոջը բեռնագրի կամ այլ փաստաթղթերի հանձնումը, ապա այդպիսիք պետք է պատշաճ կերպով ձևակերպվեն և հանձնվեն բեռնատիրոջը՝ բեռը օդանավ բարձելուց առաջ,

3.3.4. Բացառություններ, որոնք կիրառվում են միայն բեռնատերերի հանդեպ ավիափոխադրողի պատասխանատվության ապահովագրության նկատմամբ:

Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում այն հայցերով ընդդեմ Ապահովադրի, որոնք կապված են ցանկացած ուղևորի բեռին հասցված վնասի հետ հետևյալ պատճառների հետևանքով՝

ա) ջերմաստիճանի, խոնավության կամ բեռան հատուկ և բնական հատկությունների, որոնք կարող են հանգեցնել բեռան կորուստին կամ փչացմանը (չորացում, խոնավանում, հոտում, ինքնաբռնկվում և այլն) ազդեցության,

բ) բեռան պակասորդի տեսքով՝ արտաքին փաթեթավորման ամբողջականության դեպքում,

գ) մեղվաթրթուռի, կրծողների, միջատների և այլոց կողմից վնասվածքների,

դ) օդանավ բարձելու վայրին բեռը հասցնելիս և այն օդանավից բեռնաթափելուց հետո վնասվելու,

3.4. Ապահովագրական գումար և ֆրանշիզա

3.4.1. Ապահովագրական գումար է համարվում այն դրամական գումարը, որի սահմաններում Ապահովագրողը պատասխանատվություն է կրում ապահովագրության պայմանագրով սահմանված իր պարտավորությունների կատարման համար:

Ապահովագրական գումարը սահմանվում է կողմերի համաձայնությամբ:

3.4.2. Մի ապահովագրական դեպքով կամ մի պատահարի հետևանքով ապահովագրական դեպքերի շարքով ապահովագրական հատուցումը չի կարող գերազանցել ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը:

3.4.3. Ապահովագրության պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի սահմաններում Ապահովագրողը պետք է հատուցի այն բոլոր ծախսերը, որոնք նրա համաձայնությամբ կատարվել են Ապահովադրի կողմից՝ նրան ներկայացված պահանջներից ազատվելու կամ դրանք նվազեցնելու նպատակով:

3.4.4. Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում Ապահովագրողը Ապահովադրին հատուցում է նաև.

ա) վնաս պատճառելու գործերով դատական ծախսերը,

բ) ապահովագրական դեպքով վնասների նվազեցման նպատակով կատարված բոլոր հիմնավորված ծախսերը:

3.4.5. Եթե հատուցման ենթակա վնասի գումարը գերազանցում է ապահովագրական գումարը, ապա 3.4.4. ենթակետում նշված ծախսերը ենթակա են հատուցման այն համանասնությամբ, որով այդպիսի վնասի գումարը հարաբերվում է ապահովագրական գումարին:

3.4.6. Ապահովագրության պայմանագրով կարող է նախատեսվել Ապահովագրողի պատասխանատվության առանձին սահմաններ հետևյալի համար.

ա) ապահովագրության ժամանակաշրջանում առողջությանը պատճառված վնասի (մարմնական վնասվածքներ, վերքեր՝ հավասարապես մահացու)՝ յուրաքանչյուր մեկ և/կամ մի քանի դժբախտ դեպքերով,

բ) ապահովագրության ժամանակաշրջանում յուրաքանչյուր մեկի կամ մի քանիսի կամ բոլոր անձանց գույքին վնաս պատճառելու՝ միագումար ձևով մեկ կամ մի քանի ապահովագրական դեպքերով:

3.4.7. Ապահովագրության պայմանագրով կարող է սահմանվել ապահովագրական ֆրանշիզա՝ ապահովագրական հատուցումում Ապահովադրի անձնական մասնակցության չափը:

3.4.8. Բեռան համար ավիափոխադրողի պատասխանատվության ապահովագրության պայմանագրով ֆրանշիզայի չափը սահմանվում է յուրաքանչյուր օդանավի համար ապահովագրության պայմանագրով, ընդ որում.

ա) ֆրանշիզայի չափը չգերազանցող վնասները ենթակա չեն հատուցման, բացառությամբ օդանավի կործանման դեպքի, երբ Ապահովագրողը պատասխանատվություն է կրում ամբողջ ծավալով,

բ) եթե Ապահովագրողը ապահովագրության ժամանակաշրջանում հատուցումներ է կատարում մի քանի ապահովագրական դեպքերով, ապա ֆրանշիզան հանվում է նրանցից յուրաքանչյուրով:

4. Ընդհանուր բացառություններ

4.1. Ավիափոխադրողի քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության պայմանագիրը կասեցնում է իր գործողությունը և ապահովագրական հատուցումը չի վճարվում, եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել այն դեպքերում, երբ օդանավը.

ա) օգտագործվում էր օրենսդրությամբ արգելված նպատակներով կամ պայմանագրում նշվածներից տարբեր նպատակներով,

բ) գտնվում է այն աշխարհագրական սահմաններից դուրս, որոնք նշված են պայմանագրում, եթե դա թելադրված չէ օդանավի վթարով կամ անհաղթահարելի ուժի հանգամանքներով,

գ) գետնի վրա ղեկավարվում կամ կառավարվում է դրա համար չլիազորված և/կամ դրա իրավունքը չունեցող անձանց կողմից,

դ) տեղափոխվում է ցանկացած տեսակի փոխադրամիջոցով, բացառությամբ ապահովագրական դեպքի հետևանքով վնասվելուց հետո տեղափոխման կամ օդանավակայանի սահմաններում բուկսիրով տեղափոխման,

ե) օդանավակայան (հարթատեղ) թռիչք կամ վայրէջք է կատարում, որոնք չեն համապատասխանում օդանավի տվյալ տեսակի համար պահանջներին, եթե դա թելադրված չէ օդանավի վթարով կամ անհաղթահարելի ուժի հանգամանքներով,

զ) գերբեռնավորված է, ուղևորների ընդհանուր քանակը գերազանցում է տվյալ օդանավի համար ուղևորների առավելագույն քանակը և/կամ խախտվել են բեռնավորման սահմանային նորմերը կամ օդանավի կենտրոնահարմարման կանոնները,

է) թռիչք է իրականացվում ակնհայտ անսարքին վիճակում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ թռիչքը թուլատրված է թռիչքային շահագործման Ուղեցույցով և համաձայնեցված է Ապահովագրողի հետ,

ը) իրականացվում է օդանավի փորձարկում՝ կապիտալ կամ վթարային նորոքումից հետո:

4.2. Ստանդարտային և լրացուցիչ պայմանները չեն նախատեսում այն ռիսկերով առաջացած վնասի հատուցումը, որոնք բացառվում են.

ա) համաձայն «պատերազմի, արևանգման և օդազնացության այլ վտանգների ազդեցության ռիսկերի բացառման մասին» կանոնադրությամբ - AVN.48B (հավելված 1),

բ) համաձայն «ճառագայթահարման ազդեցության և ճառագայթային աղտոտման ներգործության ռիսկերի բացառման մասին» կանոնադրությամբ - AVN.38A (հավելված 2):

Ծանոթագրություն՝ 4.2. կետում նշված ռիսկերը կարող են ապահովագրվել հատուկ պայմաններով՝ լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց:

4.3. Ապահովագրության պայմանագիրը չի գործում ցանկացած համաձայնագրով (այլ քան ուղևորության տոմսը, ուղեբեռան անդորագիրը, ապրանքային բեռնագիրը, որոնք տրված են համաձայն սույն կանոնների 3.2. և 3.3. կետերի) Ապահովադրի կողմից ընդունված պատասխանատվության կամ Ապահովադրի կողմից հայտարարված իրավունքների վերաբերյալ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի պատասխանատվությունը կարող է դրվել Ապահովադրի վրա նաև այդպիսի համաձայնագրի բացակայությամբ:

4.4. Ապահովագրական պատահար չեն համարվում նաև այն բոլոր իրադարձությունները, որոնք գտնվում են ուղղակի կամ անուղղակի կապի մեջ ցանկացած տեսակի միկրոպրոցեսորներում և դրանց պարոնակող համակարգիչներում, ինչպես նաև այդ համակարգիչների ծրագրերում ամսաթվերի փոփոխման հետ, մասնավորապես 2000 թ. հունվարի 1-ի հետ: Նշված իրադարձություններով ապահովագրական հատուցում չի իրականացվում:

Չեն հատուցվում նաև այնպիսի վնասները, որոնք ուղղակի կամ անուղղակի բխում են ցանկացած տեսակի միկրոպրոցեսորների և դրանց պարոնակող համակարգիչների, ինչպես նաև այդ համակարգիչների ծրագրերի տեստավորման հետ, եթե այդպիսի տեստավորումը կապված է 1999 թ. դեկտեմբերի 31-ից հետո ցանկացած ամսաթվի հետ:

5. Ապահովագրավճարները և դրանց մուծման կարգը

5.1. Ապահովագրավճարը սահմանվում է ապահովագրության պայմանագրով և իրենից ներկայացնում է դրամական գումար, որը Ապահովադրի կողմից մուծվում է Ապահովագրողին՝ վերջինիս կողմից ապահովագրության պայմանագրով ստանձնած պատասխանատվության դիմաց:

5.2. Ապահովագրավճարի չափը որոշվում է ելնելով Ապահովադրի կողմից ընտրված ապահովագրության պայմաններից, ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետից, ռիսկի աստիճանից, լրացուցիչ ապահովագրվող ռիսկերից, ապահովագրական գումարից և այլնից:

5.3. Ապահովագրավճարի մուծման կարգը որոշվում է ապահովագրության պայմանագրով կողմերի համաձայնությամբ:

Ապահովագրավճարը Ապահովադրի կողմից ենթակա է մուծման ամբողջությամբ կամ մաս-մաս՝ նախքան ապահովագրության պայմանագրի գործողության սկիզբը, ընդ որում երկրորդ և հաջորդ ապահովագրավճարների մուծումները պետք է իրականացվեն ըստ համաձայնեցված ժամանակացույցի:

Ապահովագրության պայմանագիրը կարող է նախատեսել ապահովագրավճարի մուծման նաև այլ կարգ:

5.4. Եթե ապահովագրության պայմանագրով նախատեսված է, որ ապահովագրավճարը ենթակա է հաշվարկի և մուծման թռիչքի ավարտից հետո, ապա Ապահովագրողը ապահովագրավճարի նախնական հաշվարկը կատարում է Ապահովադրի կողմից կողմից ներկայացված փաստացի տվյալների հիման վրա:

5.5. Ապահովադիրը պարտավոր է պահպանել իր կողմից ապահովագրավճարների մուծումը հաստատող փաստաթղթերը և ներկայացնել դրանք Ապահովագրողի պահանջով:

Եթե Ապահովադրի համաձայնությամբ ապահովագրավճարները մուծում է այլ անձը, ապա այդ կապակցությամբ նա ապահովագրության պայմանագրով որևէ իրավունք ձեռք չի բերում:

5.6. Ապահովադրի պահանջով ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողը վերադարձնում է պայմանագրի չլուծված ժամկետի համար մուծված ապահովագրավճարները, մասհանելով կատարված ծախսերը, իսկ եթե Ապահովադրի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարները ամբողջությամբ,

Ապահովագրողի պահանջով ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին են վերադարձվում ապահովագրավճարները ամբողջությամբ, իսկ եթե Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովադրի կողմից ապահովագրության պայմանագիրը չկատարելով, ապա նա Ապահովադրին է վերադանձնում պայմանագրի չլուծված ժամկետի համար մուծված ապահովագրավճարները՝ մասհանելով կատարված ծախսերը,

Այն դեպքում, երբ ապահովագրության պայմանագրով կատարվել է կամ պլանավորում է կատարել ապահովագրական հատուցում պայմանագրի

վաղաժամկետ դադարեցման դեպքում ապահովագրավճարը չի վերադարձվում:

6. Ապահովագրության պայմանագրի կնքման կարգը, գործողության ժամկետը և դադարեցումը

6.1. Ապահովագրության պայմանագիրը հանդիսանում է գրավոր համաձայնագիր Ապահովադրի և Ապահովագրողի միջև, ըստ որի Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահարի առաջացման ժամանակ Ապահովադրին կամ այն անձին, որի օգտին կնքվել է պայմանագիրը, կատարել ապահովագրական հատուցում, իսկ Ապահովադիրը պարտավորվում է սահմանված ժամկետում կատարել ապահովագրավճարի մուծումները:

6.2. Պայմանագիրը կնքվում է Ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա, որը կազմվում է Ապահովագրողի կողմից սահմանված ձևով, որտեղ, որպես հիմնական տեղեկություններ պետք է նշված լինեն.

- Ապահովադրի անվանումը և իրավաբանական հասցեն,
- օդանավերի ցուցակը, դրանց նավակողի և գործարանային համարները, թողարկման տարին,
- թռիչքների բնույթը և յուրաքանչյուր օդանավի շահագործման աշխարհագրական շրջանները,
- լրացուցիչ պայմաններ, որոնք էական նշանակություն ունեն ռիսկի աստիճանը որոշելու համար:

Ապահովագրության համար դիմումը պետք է ստորագրված լինի այն ձեռնարկության ղեկավարի կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչի կողմից, որին պատկանում են օդանավերը, որոնց վերաբերյալ կատարվում է պատասխանատվության ապահովագրություն:

6.3. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է կողմերի կողմից համաձայնեցված ցանկացած ժամկետով և վավերացվում է ապահովագրական վկայագրի հանձնումով, որը ստորագրվում է Ապահովագրողի կողմից, հաստատվում է կնիքով և տրվում է Ապահովադրին:

Ապահովագրության համար դիմումը և ապահովագրավճարի մուծման վճարային հանձնարարագիրը և վկայագիրը սույն պայմանների հետ միասին կազմում են ապահովագրության պայմանագրի փասթաթղթերի լրակազմ:

6.4. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում վկայագրում նշված օրվանից, Ապահովագրողի տեղական գրո ժամից: Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան չի նախատեսված, ապա ապահովագրության պայմանագիրը ուժի մեջ է մտնում Ապահովադրի կողմից առաջին ապահովագրավճարի մուծման օրվանից ոչ շուտ, քան որում՝ մուծման օր է համարվում ապահովագրավճարի գումարը Ապահովագրողի հաշվարկային հաշիվ կամ դրամարկղ մուտք լինելու օրը:

6.5. Ապահովագրության պայմանագրի գործողության արմողջ ժամկետի ընթացքում պայմանագրի պայմանները կարող են փոփոխվել կամ լրացվել միայն կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ, այդ մասին գրավոր տեղեկացնելով մյուս կողմին, և ձևավակերպվում են կողմերի միջև լրացուցիչ արձանագրություններ կազմելու միջոցով, որոնք հանդիսանում են տվյալ պայմանագրի անբաժանելի մասը:

6.6. Ապահովագրավճարը մաս-մաս վճարելիս՝ հերթական ապահովագրավճարը Ապահովագրողի հաշվարկային հաշվին կամ դրամարկղ ապահովագրության պայմանագրով սահմանված օրը չվճարելու դեպքում, պայմանագրի գործողությունը այդ օրվանից կասեցվում է մինչև հերթական ապահովագրավճարի մուտք արվելը: Ապահովագրության պայմանագրով սահմանված օրվանից հետո 30 օրվա ընթացքում ապահովագրավճարի չմուծելու դեպքում, Ապահովագրողը կարող է միակողմանիորեն դադարեցնել ապահովագրական պայմանագրի գործողությունը: Այդ դեպքում Ապահովագրողը իրավունք ունի Ապահովադրից պահանջել մուծել մինչև պայմանագրի դադարեցումը անցած ժամանակաշրջանի համար ապահովագրավճարները:

6.7. Ապահովագրության պայմանագրի գործողությունը դադարեցվում է հետևյալ դեպքերում.

ա) պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կամ Ապահովագրողի Ապահովադրի առջև պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները ամբողջ ծավալով կատարելու,

բ) Ապահովադրի կողմից ապահովագրավճարները պայմանագրով սահմանված ժամկետներում չմուծելու,

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ապահովագրողի կամ Ապահովադրի լուծարման դեպքում,

դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դատարանի կողմից ապահովագրության պայմանագրի անվավեր ճանաչվելիս,

ե) կողմերից որևէ մի կի՛ գրավոր դիմումով հաստատված պահանջով, ընդ որում՝ դիմումը պետք է մյուս կողմին ուղարկվի ոչ պակաս քան պայմանագրի ենթադրյալ լուծման օրվանից 30 օր առաջ:

7. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

7.1. Ապահովագրության պայմանագրով կողմերի իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում են սույն պայմաններով, ապահովագրության պայմանագրի դրույթներով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

7.2. Ապահովագրության պայմանագրով իրավունքներն ու պարտականությունները Ապահովադրի կողմից չեն կարող լրիվ կամ մասնակիորեն փոխանցվել երրորդ կողմին այլ կերպ, քան Ապահովագրողի համաձայնությամբ, ինչը պետք է հաստատված լինի գրավոր ձևով:

7.3. Ապահովագրողը պարտավոր է չհրապարակել Ապահովադրի առևտրային կամ բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ:

7.4. Ապահովադրի պարտավոր է.

ա) ապահովագրության պայմանագիր կնքելիս Ապահովագրողին հայտնել իրեն հայտնի այն բոլոր հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ապահովագրական ռիսկերի գնահատման համար,

բ) Ապահովագրողին հայտնել ապահովագրության տվյալ օբյեկտի վերաբերյալ կնքված կամ կնքվելիք այլ ապահովագրության պայմանագրերի մասին,

գ) ժամանակին հայտնել Ապահովագրողին ապահովագրության պայմանագրում նշված ռիսկերում բոլոր էական փոփոխությունների մասին,

դ) ժամանակին մուծել ապահովագրավճարները:

Կողմերի փոխգործունեությունը ապահովագրական դեպքի վրա հասնելիս

7.5. Ապահովագրական դեպքի վրա հասնելիս Ապահովադրի պարտավոր է.

ա) անհապահ միջոցառումներ ձեռնարկել, պատահարի հետ կապված վնասների նվազեցման համար,

բ) անհապահ հայտնել Ապահովագրողին ապահովագրական դեպքի վրա հասնելու մասին, գրավոր տեղեկացնելով եռօրյա ժամկետում և նշելով պատահարի բոլոր հայտնի հանգամանքները,

գ) միջոցներ ձեռնարկել Ապահովագրողի կողմից այն անձանց նկատմամբ հետադարձ պահանջի իրավունքները ապահովելու նպատակով, որոնք ՀՀ օրենսդրությանը կամ միջպետական համաձայնագրերի համապատասխան պատասխանատվություն են կրում վնասի համար,

դ) հայտնել ապահովագրական դեպքով ամբողջ հետագա տեղեկատվությունը և անհրաժեշտ օգնություն ցույց տալ Ապահովագրողին,

ե) Ապահովագրողին՝ նրա հայցումով, հայտնել ապահովագրական դեպքի հետ կապված տեղեկությունները, ներառյալ այն տեղեկությունները, որոնք առևտրական գաղտնիք են կազմում,

զ) առանձն Ապահովագրողի գրավոր համաձայնության չիրականացնել այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են Ապահովագրողի շահերի դեմ, ինչպես նաև չունդունել որևէ պարտավորություններ, չկատարել որևէ վճարումներ և չխոստանալ որևէ վճարումներ կատարել, որոնք առնչություն ունեն տվյալ ապահովագրական դեպքի հետ, բացառությամբ փրկարարական աշխատանքների կազմակերպման գծով, ինչպես նաև սույն կետի (ա) և (բ) ենթակետերում թվարկված միջոցառումների ապահովման նպատակով գործողությունների:

7.6. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման վճարումից հետո, նրան են փոխանցվում այն երրորդ անձանց նկատմամբ հատուցման պահանջի վերաբերյալ Ապահովագրողի իրավունքները, որոնք օրենսդրությանը համապատասխան, պատասխանատվություն են կրում ապահովագրական դեպքով: Ապահովագրողը պարտավոր է համագործակցել Ապահովագրողի հետ և անել անհրաժեշտ ամեն ինչ նրա այդպիսի իրավունքների իրականացման և հատուցումների ստացման համար:

8. Ապահովագրական հատուցման վճարման իրականացման կարգը և պայմանները

8.1. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման վճարումը կատարվում է Ապահովադրի՝ ապահովագրական հատուցման մասին գրավոր դիմումի և Ապահովագրողի կողմից ապահովագրական ակտի (եզրակացության) հիման վրա: Այն վճարումները, որոնք Ապահովադրի կողմից կատարվել են ի հաշիվ ապագա ապահովագրական հատուցումների՝ առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության, ուշադրության չեն առնվում:

8.2. Ապահովագրական ակտը կազմվում է Ապահովագրողի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից: Անհրաժեշտության դեպքում Ապահովագրողը իրավունք ունի ինքնուրույն պարզելու ապահովագրական դեպքի պատճառներն ու հանգամանքները:

8.3. Ապահովագրական հատուցման վճարման վերաբերյալ դիմումի հետ միաժամանակ, Ապահովադրի պետք է Ապահովագրողին ներկայացնի բնօրինակը կամ հաստատված պատճենները.

ա) ապահովագրական դեպքի հանգամանքներին, դրա պատճառներին, վնասի չափին վերաբերվող փաստաթղթերը, (պետական և գերատեսչական հանձնաժողովների եզրակացությունները և այլն),

բ) երրորդ անձանց օգտին վնասի գումարը Ապահովադրից բռնագանձելու մասին դատական մարմինների որոշումը (կամ նրա պատճենը)՝ եթե այդպիսին պահանջվի Ապահովագրողի կողմից,

8.4. Վթարային ակտը Ապահովագրողի կողմից կազմվում և հաստատվում է տեղի ունեցած ապահովագրական դեպքով վերը նշված փաստաթղթերի ամբողջ լրակազմը (կոմպլեկտը) Ապահովագրողի մոտ ստացվելուց հետո մեկամսյա ժամկետում:

Դրա հետ մեկ տեղ.

ա) Ապահովագրողը կարող է երկարացնել այդ ժամկետը մինչև երեք ամիս, այդ մասին տեղեկացնելով Ապահովադրին՝ եթե պահանջվում է լրացուցիչ տեղեկատվության ստացում պետական մարմիններից և/կամ Ապահովագրողի կողմից սեփական հետաքննության անցկավում,

բ) Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրական ակտը հաստատել մինչև օդանավի հետ կապված պատահարի պաշտոնական հետաքննության ավառտը՝ ապահովագրական պատահարի սեփական գնահատման հիման վրա:

8.5. Մեկ պատճառով վրա հասած մի քանի վնասները դիտվում են որպես մեկ ապահովագրական դեպք:

8.6. Այն դեպքում, երբ պատճառված վնասները փոխհատուցվել են այլ անձանց կողմից, ապա Ապահովագրողը վճարում է միայն ապահովագրության պայմանագրով հատուցման ենթակա գումարների և այդ անձանցից ստացված կամ նշանակված փոխհատուցման գումարի միջև տարբերությունը:

9. Ապահովագրական հատուցման վճարման մեթոժման կամ նվազեցման հնարավոր դեպքեր

9.1. Ապահովագրողը իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը այն դեպքերում, որոնք նշված են սույն պայմանների 4-րդ բաժնում «Ընդհանուր բացառություններ», ինչպես նաև.

ա) Ապահովադրի՝ ապահովագրական պատահարի առաջացմանն ուղղված դիտավորյալ գործողությունների դեպքում,

բ) Ապահովադրի կողմից հանցագործություն կատարելու դեպքում, որը ուղղիղ պատճառական կապի մեջ է գտնվում ապահովագրական դեպքի հետ,

գ) թռիչքային կամ տեխնիկական անձնակազմի կողմից թռիչքային շահագործման գծով Ուղեցույցի կամ այլ ղեկավար փաստաթղթերի պահանջների կոպիտ խախտման դեպքում, եթե այդ խախտումը ապահովագրական դեպքի պատճառ է հանդիսացել,

դ) Ապահովադրի կողմից Ապահովագրողին ապահովագրության օբյեկտի և վնասի չափերի մասին ակնհայտ կեղծ տեղեկություններ հաղորդելու դեպքում:

9.2. Եթե Ապահովադիրը միջոցառումներ չի ձեռնարկել ապահովագրական դեպքի հետևանքով առաջարկվող հետագա վնասի կանխման համար, ապա Ապահովագրողը իրավունք ունի այդ լրացուցիչ վնասի գումարի չափով նվազեցնելու ապահովագրական հատուցումը:

9.3. Եթե ի հայտ գան այնպիսի հանգամանքներ, որոնք ըստ օրենքի կամ սույն պայմանների գրկում են Ապահովադրին ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից, ապա նա պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել ստացված ապահովագրական հատուցման գումարը:

10. վեճերի լուծման կարգը

10.1. Ապահովագրության պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Նման համաձայնության ձեռք չբերման դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ն Ե Ր

Հավելված 1. Պատերազմի, առևանգման և օդագնացության այլ վտանգների ազդեցության ռիսկերի բացառման մասին կանոնադրություն (AVN. 48 B)

Հավելված 2. Ճառագայթահարման ազդեցության և ճառագայթային աղտոտման ներգործության ռիսկերի բացառման մասին կանոնադրություն (AVN.38A)

Հավելված 3. Աղմուկի, աղտոտման և այլ վտանգների ազդեցության ռիսկերի բացառման մասին կանոնադրություն (AVN.46B)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Պատերազմի, առևանգման և օդագնացության այլ վտանգների ազդեցության ռիսկերի բացառման մասին (AVN. 48 B)

Ապահովագրական հատուցումներ չեն կատարվում այն վնասներով, որոնք առաջացել են.

ա) պատերազմի, ագրեսիայի, հուզումների, ներխուժման, արտաքին թշնամիների ռազմական գործողությունների (անկախ նրանից թե պատերազմը հայտարարվել է, թե ոչ), քաղաքացիական պատերազմի, ռազմական դրության, ռազմական հեղաշրջման, իշխանությունը անօրինական զավթելու կամ այդ փորձերի հետևանքով,

բ) ցանկացած զենքի պայթյունի հետևանքով, որն առաջացնում է ատոմային կամ միջուկային քայքայում կամ համադրում (սինթեզ) կամ ցանկացած այլ համանման ռեակցիա, որն առաջացնում է ռադիոակտիվ նյութերի արտադրում (վերարտադրում),

գ) գործադուլների, անկարգությունների, քաղաքացիական հուզումների և աշխատանքային անկարգությունների, խախտումների հետևանքով,

դ) մեկ կամ ավելի մարդկանց ցանկացած գործողությունների հետևանքով, որոնք ուղղված են քաղաքական կամ ահաբեկչական նպատակների հասնելուն, անկախ այն բանից, թե այդ մարդիք համարվում են արդյոք ինքնիշխան պետությունների գործակալներ և այդ գործողությունների հետևանքով վնասը արդյոք պատճառվել է պատահականորեն կամ կանխամտածված,

ե) սպառնալիքի, նենգադուլի կամ դիվերսիայի ցանկացած ակտի հետևանքով,

զ) բռնագրավման, ազգայնացման, զավթման, կալանավորման, ազատագրվման, յուրացման, սեփականության իրավունքով կամ օգտագործման համար կամ որևէ կառավարության (քաղաքացիական, զինվորական կամ փաստացի կառավարող) կամ հասարակական կամ պետական իշխանության կարգադրությամբ կատարված բռնագրավման հետևանքով,

է) օդանավի հափշտակության կամ ցանկացած անօրինական զավթման կամ անօրինական տիրապետման հետևանքով,

ը) թռիչքի ժամանակ օդանավի կամ նրա անձնակազմի հափշտակության կամ ցանկացած անօրինական զավթման կամ անօրինական տիրապետման (նեռարյալ այդպիսի զավթման կամ տիրապետման ցանկացած փորձ) հետևանքով, որոնք ձեռնարկվել են օդանավի նավակողում գտնվող ցանկացած անձի կամ անձանց կողմից որոնք գործել են առանց Ապահովադրի համաձայնության:

Բացի դրանից, չեն հատուցվում նաև ծախսերը, որոնք առաջացել են այն դեպքերում, երբ օդանավը վերը նշված ցանկացած պատճառներով գտնվում է Ապահովադրի վերահսկողությունից դուրս:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ճառագայթահարման ազդեցության և ճառագայթային աղտոտման ներգործության ռիսկերի բացառման մասին (AVN.38A)

1. Ապահովագրական դեպքերին չեն դասվում և ապահովագրական հատուցումներ չեն կատարվում, եթե.

ա) առողջությանը (մարմնական վնասվածքներ, վերքեր՝ հավասարապես մահացու) կամ գույքին պատճառված որևէ վնասը առաջացել է իոնացնող ճառագայթահարման ազդեցության կամ ճառագայթային աղտոտման ուղղակի կամ անուղղակի ներգործության հետևանքով,

բ) ցանկացած տեսակի սեփականությանը հասցված վնասը, եթե այդ վնասի ուղղակի կամ անուղղակի պատճառ կամ պատճառներից մեկն է համարվում իոնացնող ճառագայթումը կամ ճառագայթահարումը որևէ աղբյուրից:

2. Ապահովագրական հատուցումը վճարվում է (սույն պայմանների 1-ին կետի պայմաններին համապատասխան) այն վնասների, կործանումների, ծախսերի կամ պատասխանատվության համար, և որոնց ուղղակի կամ անուղղակի պատճառ կամ պատճառներից մեկը համարվում է իոնացնող ճառագայթահարում կամ ռադիոակտիվ վարակումը որևէ ռադիոակտիվ նյութերից՝ Օդային Տրանսպորտի Միջազգային Ասոցիացիայի (INTERNATIONAL AIR TRANSPORT ASSOCIATION - IATA) կանոններին համապատասխան որպես բեռ դրանց փոխադրելու ընթացքում, իոնացնող ճառագայթահարման ազդեցության կամ ճառագայթային աղտոտման ներգործության հետևանքով, հետևյալ պայմանների պահպանումով.

ա) ապահովագրողը պատասխանատվություն է կրում միայն այն պահանջների նկատմամբ, եթե ցանկացած ռադիոակտիվ նյութերի փոխադրումը բավարարում է IATA-ի այն պահանջներին, որոնք վերաբերվում են օդով ռադիոակտիվ առարկաների փոխադրմանը,

բ) օդանավի խորտակման կամ վնասվածքի գծով պահանջները, սույն կանոնադրության 2-րդ կետի համաձայն, ընդունվում են այն դեպքում, եթե վարակման մակարդակը գերազանցում է ստորև բերված սահմանակով սահմանված առավելագույն թույլատրելի մակարդակը.

Ճառագայթումներ	Մակերևութի արձանագրված ռադիոակտիվ վարակման առավելագույն թույլատրելի մակարդակը (միջինացում 300 սմ ² մակերեսով)
Բետա, գամմա ճառագայթումներ և ալֆա ճառագայթումներ՝ ցածր թունավորության	ոչ ավելի քան 4 Bq/cm ² (0.1 Ci/cm ²)
Մյուս բոլոր ալֆա ճառագայթումներ	ոչ ավելի քան 0.4 Bq/cm ² (0.01 Ci/cm ²)

զ) ապահովագրության պայմանագիրը, որը կնքվել է սույն կանոնադրության 2-րդ կետի պայմաններով Ապահովագրողի կողմից կարող է ցանկացած ժամանակ լուծվել այդ մասին 7 օր առաջ ծանուցելով:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Աղմուկի, աղտոտման և այլ վտանգների ազդեցության ռիսկերի բացառման մասին (AVN.46B)

1. Ապահովագրական հատուցումներ չեն կատարվում այն վնասներով, որոնք ուղղակի կամ անուղղակի առաջացել կամ տեղի են ունեցել.

ա) աղմուկի (մարդկային ականջի կողմից ընկալվող կամ չընկալվող), թռթռումների, ձայնային հարվածի և/կամ այլ նման երևույթների ներգործության հետևանքով,

բ) միջավայրի ցանկացած աղտոտման կամ վարակման հետևանքով,

գ) էլեկտրական կամ էլեկտրամագնիսական խոչընդոտների ներգործության հետևանքով: